ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«____» _____ 20 թ.

No _____

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան,

Հայտնում եմ Ձեզ, որ Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի թիվ 35 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում ճաշարանի աշխատանքները կազմակերպելու նպատակով՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար անհրաժեշտություն է առաջացել ավելացնելու հոսանքի օգտագործման հզորությունը՝ ժամում 60 կՎտ, որի արդյունքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 17.02.2021թ. կնքվել է N 8222554 (ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ) պայմանագիրը:

Համաձայն վերոհիշյալ պայամանգրի 2-րդ կետի՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը կազմում է 990500.00 դրամ, ներառյալ ԱԱՀ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքները կազմակերպելու համար, պայմանագրի 2-րդ կետի, 3-րդ ենթակետի համաձայն՝ միացման վճարի 50 տոկոսը՝ կանխավճարը, փոխանցել <<ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԲԸ-ի 2474620000320150 բանկային հաշվին:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆՊԵՏԻ Ժ/Պ՝

ՄՀԵՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝ Գոռ Գևորգյան
ԳԿՎ շինարարական ծրագրերի
համակարգման բաժին
Հեռ. /060/ 544-376